ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2022 թվականի № ----Ա
քաղ. Երևան

«ՕԴԱՅԻՆ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿԱՊԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №494-Ն որոշման համաձայն (այսուհետ՝ Որոշում)՝ «Օդային հեռահաղորդակապի միջազգային ընկերության հայկական մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանումը մինչև սույն թվականի հուլիսի 30-ը Հանձնաժողով պետք է ներկայացներ նույն որոշման N2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան 2022 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն), սակայն չի ներկայացրել,

բ) Որոշմամբ սահմանված պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը «Օդային հեռահաղորդակապի միջազգային ընկերության հայկական մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանման նկատմամբ 2022 թվականի սեպտեմբերի 6-ից հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 6-ի №ԳԲ/34.2-Մ2-7/3043-2022 գրությամբ,

գ) «Օդային հեռահաղորդակապի միջազգային ընկերության հայկական մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանումը վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

դ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ «Օդային հեռահաղորդակապի միջազգային ընկերության հայկական մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանումը խախտել է Հաշվետվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 35-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջի խախտման համար «Օդային հեռահաղորդակապի միջազգային ընկերության հայկական մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանմանը նախազգուշացնել:
2. «Օդային հեռահաղորդակապի միջազգային ընկերության հայկական մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանմանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2022 թվականի 1-ին կիսամյակի Հաշվետվությունը:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Օդային հեռահաղորդակապի միջազգային ընկերության հայկական մասնաճյուղ» առանձնացված ստորաբաժանմանը օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2022թ.